БАЦ ОЛИМПИАДА

# ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
## 2023-2024
### Մայրենի (4-րդ դասարան)

Անուն Ազգանուն ____________________
Դպրոց ____________________
Դասարան ____________ Խումբ ____________

**1.** Ո՞ր շարքում են բնակիչները դասավորված ճիշտ նույն հաջորդականությամբ, ինչ նրանց հետևյալ ապրելատեղերը՝ փեթակ, որջ, տուն, ջուր, բույն: Նշի՛ր: (0,5 միավոր)

Ա. մեղու, արջ, մարդ, շուն, ձուկ
Բ. մեղու, արջ, ձուկ, մարդ, շուն
Գ. մեղու, շուն, մարդ, ձուկ, արջ
Դ. մեղու, արջ, մարդ, ձուկ, շուն
Ե. մեղու, արջ, շուն, ձուկ, մարդ

**2.** Տրված բառակապակցություններից ո՞րը կարող է գործածվել «փոքրիկ» իմաստով: Նշի՛ր: (0,5 միավոր)

ա) մի գլուխ    բ) մի մատ    գ) մի թաթիկ    դ) մի հոնք    ե) մի վիզ

**3.** Շարքերում ընդգծի՛ր «ավելորդ»: (1,5 միավոր)

ա) մեծ, խոշոր, հսկա, խոժոռ, վիթխարի

բ) բաղձալի, անձկալի, ցավալի, ցանկալի, տենչալի

գ) դյութիչ, բրիչ, հմայիչ, գրավիչ, հրապուրիչ

**4.** Ո՞ր բառի տառերի վերադասավորումով նոր բառ չես կազմի: (0,5միավոր)

ա/ ծառա    բ/ վտակ    գ/ սեղան    դ/ կամար    ե/ կավիճ

**5.** Օգտվելով միայն տրված բառերի արմատներից և ածանցներից՝ ստացի՛ր նոր բառեր։ (2 միավոր)

նախշուն, նկարիչ ____________________

գրասիրտ, անծանոթ ____________________

մայրաքաղաք, բալենի ____________________

ուղեգիր, ծառատունկ ____________________

**6.** Եթե պատգամավորություն բառից հանենք որմը, ապա մեխը, այնուհետև անտեսենք թվականը և դերանունը, մնացած տառերով ո՞ր բառը կկազմենք։ (1 միավոր)

____________________

**7.** Կազմի՛ր երկու բարդ բառ, որոնց վերջին արմատը լինի ուղի բառը։Այդ բառերի առաջին բաղադրիչներով կազմի՛ր մեկական նոր բառ։ /2 միավոր/

____________________

____________________

____________________

____________________

**8.** Յուրաքանչյուր բառի համար գրի՛ր երկու հոմանիշ և մեկ հականիշ։ (3 միավոր)

| | հոմանիշ | հոմանիշ | հականիշ |
|---|---|---|---|
| տարակուսել | | | |
| կազդուրվել | | | |
| աչալուրջ | | | |

**9.** Բացատրի՛ր հետևյալ դարձվածքների իմաստը։ (3 միավոր)

ականջին օղ անել ____________________

գլուխ տալ ____________________

բաց ճակատով ____________________

աշխարհով մեկ լինել ____________________

բերանը ջուր առնել ____________________________________________

աչքը ջուր կտրել____________________________________________

**10.** Ավարտի՛ր առած-ասացվածքները: /2միավոր/

Մարդն ինքը պիտի աշխատի,

______________________________________________________________________

Ծառի տակին պառկելով՝

______________________________________________________________________

Թռչունը թևով է թռչում,

______________________________________________________________________

Օձի կծածը կլավանա,

______________________________________________________________________

Աշխարհի շինողն ու

______________________________________________________________________

**11**.Հորինի՛ր մի պատմություն, որ վերնագիրը լինի տրված առած-ասացվածքը: /4միավոր/

Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք

Ընդհանուր միավորը————